«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 5-րդ հոդվածի 4-րդ մասից հանել 2-րդ նախադասությունը։

Հոդված 2. Օրենսգրքի 13-րդ հոդվածի՝

1) առաջին պարբերությունը համարակալել.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Աշխատանքային հարաբերությունների ծագումը, փոփոխումը և դադարումն արտացոլվում է աշխատանքային պայմանագրերի կնքման թվային հարթակի միջոցով։»։

Հոդված 3. Օրենսգրքի 14-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «գրավոր» բառը.

2) 1.1-ին մասում «Եթե աշխատանքային պայմանագիրը կնքվել է Հայաստանի Հանրապետությունից դուրս այլ վայրում կամ սույն օրենսգրքի 85-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով փոստային կամ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով փոխանակելով, կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտն աշխատողին ուղարկվել է սույն մասով սահմանված կապի միջոցներով, ապա աշխատանքային պայմանագիրը կնքված, իսկ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտն ընդունված է համարվում Հայաստանի Հանրապետությունում, եթե՝» բառերը փոխարինել «Աշխատանքային պայմանագիրը կնքված, իսկ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտն ընդունված է համարվում Հայաստանի Հանրապետությունում նաև, եթե՝» բառերով։

Հոդված 4. Օրենսգրքի 17.1-ին հոդվածի 4-րդ մասում «և 1.2-րդ մասերին» բառերը փոխարինել «մասին» բառով։

Հոդված 5. Օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետից հանել «(կամ)» բառը, իսկ 3-րդ մասից՝ «գրավոր» բառը։

Հոդված 6. Օրենսգրքի 85-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Աշխատանքային պայմանագիրը կնքվում է աշխատանքային պայմանագրերի կնքման թվային հարթակի միջոցով։ Աշխատանքային պայմանագիրը կնքվում է՝ կողմերի, իսկ մինչև տասնչորս տարեկան աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի դեպքում՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով։».

2) Ուժը կորցրած ճանաչել 1.1-1.3-րդ մասերը։

Հոդված 7. Օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասից հանել «գրավոր» բառը։

Հոդված 8. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13.1-ին գլխով.

«Գ Լ ՈՒ Խ 13.1

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԹՎԱՅԻՆ ՀԱՐԹԱԿԸ

Հոդված 102.1. Աշխատանքային պայմանագրերի կնքման թվային հարթակը և հարթակի կիրառման հիմնական սկզբունքները

1. Աշխատանքային պայմանագրերի կնքման թվային հարթակը (այսուհետև՝ թվային հարթակ) տվյալների ամբողջություն է, որն ապահովում է՝

1) գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող յուրաքանչյուր աշխատողի՝ աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման կամ աշխատանքից ազատման մասին անհատական իրավական ակտի, ինչպես նաև դրանց անբաժանելի մաս հանդիսացող համաձայնագրերի օրինակների և դրանց վերաբերյալ տվյալների մուտքագրումը և օգտագործումը.

2) կողմերի էլեկտրոնային ստորագրությամբ աշխատանքային պայմանագրերի կնքումը.

3) աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ պատշաճ պետական վերահսկողության իրականացումը։

2. Թվային հարթակի կիրառման հիմնական սկզբունքներն են՝

1) աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության արդյունավետության ապահովումը.

2) էլեկտրոնային հարթակից սույն օրենսգրքով սահմանված կարգով օգտվելու իրավասություն ունեցող անձանց համար՝ էլեկտրոնային հարթակում առկա տվյալների և իրենց լիազորությունների շրջանակներում իրազեկման ենթակա տեղեկատվության ցանկացած պահի հասանելիությունը.

3) անձնական տվյալներ պարունակող տեղեկությունների գաղտնիության ապահովումը:

Հոդված 102.2. Թվային հարթակի կառավարումը, տվյալներին հասանելիությունը, տեխնիկական պահանջները և կառավարման կարգը

1. Թվային հարթակի կառավարումն իրականացնում է Պետական եկամուտների կոմիտեն (այսուհետև՝ Կոմիտե):
2. Տեսչական մարմնին տրվում է թվային հարթակի տվյալներին հասանելիություն այն ծավալով, որն անհրաժեշտ է օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակում սույն օրենսգրքով նախատեսված՝ աշխատանքային օրենսդրության, ինչպես նաև աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման նկատմամբ վերջինիս կողմից իրականացվող վերահսկողության համար:
3. Կոմիտեին տրվում է թվային հարթակի տվյալներին հասանելիություն այն ծավալով, որն անհրաժեշտ է աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու կամ աշխատողի համար գրանցման հայտ ներկայացնելու ճշտության ստուգումներ, ինչպես նաև աշխատողի համար հաշվարկված և վճարված եկամուտների, պահված եկամտային հարկի գումարների և կատարված սոցիալական ու այլ վճարների համապատասխանության նկատմամբ հարկային հսկողություն իրականացնելու համար՝ օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակում:
4. Թվային հարթակում գործատուին և աշխատողին տրվում է էլեկտրոնային տվյալներին հասանելիության պատուհան (անձնական էջ): Մինչև տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ էլեկտրոնային տվյալներին հասանելիությունը տրվում է ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին, ով ստորագրել է աշխատանքային պայմանագիրը:
5. Թվային հարթակին ներկայացվող տեխնիկական պահանջները, կառավարման կարգը և թվային հարթակի տվյալներին հասանելիության առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 102.3. Թվային հարթակում տվյալների մուտքագրումը և օգտագործումը

1. Պետական մարմիններում առանձին պաշտոնների վերաբերյալ

տեղեկությունների հրապարակման սահմանափակումներով պայմանավորված, ինչպես նաև եթե աշխատողի աշխատանքային պայմանագրում կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտում և դրանց անբաժանելի մաս հանդիսացող փաստաթղթերում ներառվելիք՝ անձին վերաբերող տեղեկությունները օրենսդրությամբ սահմանված են որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկություններ, ապա Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող են սահմանվել տվյալ տեղեկությունները թվային հարթակ մուտքագրելու առանձնահատկություններ կամ բացառություններ:

2. Աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում գործատուն պարտավոր է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել տվյալների թարմացումը (տեղեկությունների մուտքագրումը) թվային հարթակում:
3. Թվային հարթակում տվյալների ու աշխատողի մասին անհատական տեղեկությունների մուտքագրման առանձնահատկություններն ու բացառությունները և օգտագործման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 9. Օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասում «ձևակերպվում է» բառից հետո լրացնել «թվային հարթակի միջոցով» բառերով:

Հոդված 10. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի դեկտեմբերի 20-ից:
2. 2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ ութամսյա ժամկետում, թվային հարթակ են մուտքագրվում գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողների աշխատանքային պայմանագրերը՝ տվյալ պահին գործող պայմաններով:
3. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից՝ ութամսյա ժամկետում: